ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 02 2025 թ.
№ ՄՇԵՌ-գԿԳ-150

«ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 08242265
ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 17
հեռ. 033 333 714
էլ. փոստ orangelunch@bk.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 24.10.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-8/17-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2024թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 30.11.2024թ., մատակարարել 2000 հատ դրոշներ, սակայն «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանք չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2025թ. փետրվարի 14-ին** միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **20 399** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և **11 999** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ **360 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ **540 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, որ եթե մինչև **2025թ. փետրվարի 24**-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **360 000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **540 000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, մինչև **2025թ. փետրվարի 24**-ը ներառյալ, ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարվելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանք գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ